

ԱԶԳԱՅԻՆ

ՅՈՎԱՆՔ ԻԶՄԵՐԵԱՆՅՈՒ ԿՏԱԿԸ ԵՒ ՆՈՐԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ.

1883 թ. Նոյեմբերի 13 ին վախճանեցաւ Յովսէփ Խզմիրեանց։ Նորա կտակի հաստատութեան ձեւակերպութիւնները մի քանի ամիս տեւեցին և միայն 1881 ի սկզբներում ինձ, իբրեւ հանգուցիալի կտակակատարին յանձնեցին նորա կտակը՝ գործադրութեան համար։ Այս կտակի մէջ կար մի թղթի կտոր, որի վերայ հանգուցեալ կտակարարը իւր ձեռքով գրել էր հետեւեալ խօսքերը « ինչ որ եմ ամենայն բանն ճշտութեամբ կատարէք. Յ. Խզմիրեան »։ Այս պարզ խօսքերն ինձ նախաբան ընտրեցի հանգուցեալի կտակի գործադրութեան գործառնութեանց մէջ, որոնց մասին պարտաւոր եմ համարում այժմ համար տալ, երբ կտակի բոլոր արամագրութիւնները կատարուած են արդէն։

Հանգուցեալ քարերարն իւր կտակում՝ հետեւեալ նուէրներն է թողել յօգուտ ազգին. ա) Պետական պարտքերի բարձման յանձնաժողովի 10,000 ռ. տոմսակ, որի տոկոսները պէտք է գործածուին գիտութիւն, արտեսանք և հայերէն լեզուի ուսում՝ ծաւալելու համար հայերի մէջ հաճկատանում, Կարին կամ Մուշ քաղաքներում (յօդ. 6, 7)։ Բ) Նոյն Յանձնաժողովի 10,000 ռ. տոմսակ, որի տոկոսները մրցանակ պիտի բաշխուին Հայոց Պատմութեան և հայերէն լեզուագիտութեան մասին լաւագոյն երկատիրութեանց համար (յօդ. 8)։ Այս երկու նուիրատուութեանց գործադրութեան իրաւունքն յանձնուած է Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին (յօդ. 9)։ Գ) Նոյն յանձնաժողովի 5000 ռ. տոմսակ նուիրում է Ղլլարի Ա. Դրիգոր Լուսաւորչու եկեղեցուն, որի տոկոսները պիտի գործածուին նոյն քաղաքի աղջկանց ծխական վարժարանին օգնելու համար, կամ, եթէ այս վարժարանը փակուելու լինի, քաւոր հայ օրհարգներին օժիտ տալու համար (յօդ. 10)։ Դ) Բացի այս 25,000 նուիրատուութիւնը՝ հանգուցեալի եղբայրը ի յիշատակ նորա ներկայացրեց ինձ 3000 ռ., որոց 1000ը յատկացնում էր

Ս. Էջմիածնի ճեմարանի օգտին՝ 1000ը Թիֆլիսի գրքերի հրատարակութեան ընկերութեանը և 1000 Ս. Պետերբուրգի չքաւոր հայ ուսանողներին բաժանելու համար, որոց գործադրութիւնը այս կամ այն եղանակով՝ թողնում էր իմ՝ կամքին (նամակ 1884, Փետրւոյ. 8): Է) Հանգուցեալ կտակարարի մահից յետոյ բաւական գրքեր մնացին, մեծ մասամբ հին մատենագիրներից մի քանիսկան օրինակներով, որոնք հանգուցեալը գնում էր՝ մատենագրողներին և հրատարակչներին խրախուսելու համար: Այս գրքերը ևս յանձնուեցան իմ անօրէնութեան:

Այս պատճառով իմ իբրեւ կտակակատարի գործունէութիւնս հինգ գլխաւոր մասերի են բաժանւում, վերոյիշեալ հինգ կետերի համաձայն:

Կաակը և կտակեալ տոմսակներն ստանալով՝ Խոօքի համաձայն 1884ի փետրուարի 10 ին խնդրագրով գիմեցի Պետական պարտքերի բարձման ֆանձնաժողովին, որ կապուած 20,000 ռ. գումարը գրէ Պատրիարքարանի անունով (երկու տոմսակ, իւրաքանչիւրը 10,000 ռ.), և 5000 ռ. գումարը Ղզլարի Ս. Գրիգոր Լուսաւորչու եկեղեցու անունով, և այդ տոմսակների վկայականների մէջ արձանագրէ այն պայմանները, որոնք յայտարարել է կտակարարն իւր կտակով: Նոյն թուականի մարտի 10 ին հանգուցեալ Ներսէս Պատրիարքին անդեկութիւն տալով այս մասին՝ ուղարկեցի Յ. Իվմիրեանցի կտակի վաւերացրած մի օրինակը: Մայիս ամսին Պետական պարտքերի բարձման ֆանձնաժողովին, իմ խնդրի համաձայն կատարեց տոմսակների արձանագրութիւնն իւր մատեաններում: Պատրիարքարանի և Ս. Գրիգոր եկեղեցու անունով և վկայականներով հանգերձ ինձ վերագարձեց. (Պատրիարքարանի տոմսակների համարները՝ 169022--93585 և 169024--38115, իսկ Ս. Գրիգոր Լուսաւորչու եկեղեցու տոմսակի համարը՝ 169023--93586): Այս տոմսակները ստանալով՝ մայիսի 21 ին Պատրիարքարանին անդեկութիւն տուի և յայտնելով թէ այդ տոմսակները մատեան անցուեւելուց յետոյ՝ նոյա տոկաններն ստանալու համար իւրաքանչիւր անգամ՝ պէաք է ներկայացնել տոմսակներն՝ հարցրիւ թէ ինչպէս կան օրինէ պատրիարքարանը այդ տոմսակ-

ներքի մատին—իրանն ուղարկել, թէ Պետերբուրգում մի օրինական հաստատութեան յանձնել, որը տարին երկու անգամ Պետական գանձարան ներկայացնելով տամսակներն ու վկայագիրները տոկոսներն ստանայ և Պատրիարքարանին հասցնէ։ Երբև օրինական և ազահով հաստատութիւն՝ ես ցոյց տուի Ա. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրարանը։ Արովհետև ներսէս Պատրիարքի հիւանդութեան պատճառով բաւական ժամանակ պատասխան չտացայ իմ հարցմանը, ուստի չկամենալով այլ ևս մօտս պահել օտար տւանդը՝ յուլիս ամսի 11 ին դիմեցի Արտաքին գործոց նախարարութեան Ասիական բաժնի, և ներկայացնելով (2 տամսակ 10,000-ական ռ. արժողութեամբ և նոցա վկայականները՝ խնդրեցի Կ. Պօլսի Ռուսաց գեսպանատան միջոցով Պատրիարքարանին յանձնել։ Սօս մի տարի ժամանակ, ներսէս Պատրիարքի հիւանդութեան, յետոյ մահուան առիթով և նոր պատրիարքի ընտրութեան խառն ժամանակները այս տամսակները մնացին Ռուսաց գեսպանատանում, և միայն 1885 թ. յուլիսի 20 ին նորընտիր Յարութիւն Պատրիարքն շ. 169 գրութեամբ ինձ տեղեկութիւն տուեց, թէ տամսակները ստացել է (նորա պաշտօնական ստացագիրը հայերէն և գաղղիերէն լեզուներով՝ Ասիական բաժնի միջոցով ստացայ, ստորագրուած 1885 թ. յուլիսի 19-ի), և թէ իւր հսկողութեան տակ կաշմուեցաւ յանձնաժողով՝ կտակուած գումարների տոկոսների գործածութեան հրահանգն յօրինելու համար, համաձայն կտակի արամադրութեանց։

Այս յանձնաժողովը կէս տարուց տւելի աշխատելով և ինձ հետ խորհրդակցելով՝ յօրինեց հրահանգ մրցանակաբաշխութեան մատին, և որոշեց օրիորդաց ուսումնարան բանալ Տարօնում, ինչպէս ինձ հաղորդեց Սրբ. Յարութիւն Պատրիարքը 1886 թ. փետրուարի 18 ին շ. 191 գրութեամբ, նաև ընտրուեցաւ մնայուն յանձնաժողով, Վիգմիրեան մնայուն յանձնաժողով՝ անունով, գործադրելու համար կտակի տնօրենութիւնները։ Այս յանձնաժողովում ընտրուեցան՝ Գ. Նորատունիեան—ատկնապետ, Գարեգին վարդապետ Թաթարեան—ատկնադպիր,

Յ. Էսայեան — գանձապետ (Պատր. գրութիւնն 1886 փետրվար. 20, թ. 1):

Նոյն 1886 թուի աշնան Պօլիս գտնուելով՝ հրաւիրուեցայ Յանձնաժողովի նիստին, որտեղ բացատրեցի, թէ կտակարարի բուն ցանկութիւնն էր, որ օրինորդաց ուսումնարանը բացուի Կարինում, բայց թէ նա աչքի առաջ ունենալով կարելի քաղաքական փոփոխութիւններ՝ նշանակել էր Կարնոյ հետ և մի ուրիշ հեռաւոր քաղաք (Մաւշ) իբրև այդ ուսումնարանին հաստատելու տեղ. ուստի առաջարկեցի Մաւշի փոխանակ առայժմ Կարնոյ օրինորդաց ուսումնարանի օգտին գործ դնել կտակուած գումարի տնօրէնները, Յանձնաժողովը հաւանելով իմ բացատրութեան՝ որոշեց Կարնոյ օրինորդաց ուսումնարանի բանալ ձեռագործի դասարան և յատուկ վարժուհի հրաւիրել այս նպատակով:

1886 թ. դեկտ. 11/25 Յանձնաժողովը հ. 14 գրութեամբ տեղեկացրեց ինձ, որ Crédit lyonnais ընկերութեան միջոցով ստացել է 1886-ի յաւնութարից յանձնուած առկոսներն 3000 ր., իսկ 1887 թ. Մնայուն Յանձնաժողովն հրատարակեց իւր մշակած յայտագիրն այն պայմանների մասին, որոց պիտի համապատասխանեն մրցանակի առաջարկուող երկրասիրութիւնները: Նոյն թուականի յուլիս ամսին Ս. Թարգմանչաց օտնի օրն Կ. Պօլսում առաջին անգամ կատարուեցաւ Իզմիրեան մրցանակաբաշխութեան հանդէսը՝ մեծ փառաւորութեան:

Դրեթէ միւսնայն ժամանակ հետեւելով յառաւ Դղլարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն նուիրուած գումարը տեղ հասցնելու՝ նոյն եղանակով ինքիր մատուցի Պետական պարտքերի բարցման Յանձնաժողովին և ստանալով նոր տոմսակ 5000 ր. վկայագրով հանդերձ՝ 1886, մայիսի 24 ին ուղարկեցի Աթդերթանի թեմական Ատեանը, ինչքելով անել պարտուպտոշած ափսոսանքներն և այս մասին նոյն թուականով տեղեկութիւն տուի Դղլարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխանին: 1886 յունիսի 1-ին թեմական Ատեանը հ. 906 գրութեամբ տեղեկութիւն տուեց ինձ, որ տոմսակն ու վկայագիրը ստացել է և արձանագրել օտարապաւական գումարների

տամարում 51 համարի տակ:

Ինչպէս վերը յիշեցի՝ Իզմիրեանի ազգականներն ի յիշատակ հանգուցեալի իմ՝ տնօրէնութեան յանձնել էին 3000 ր., գործածելու համար 1000 ր. յօգուտ Հայերէ գրքերի հրատարակութեան ընկերութեան, Ս. Էփմիածնի ձեմարանի և Ս. Պետերբուրգի հայ քաւար ուսանողներին: Այս գումարներն ստանալով 1881 մարտի 6 ին գրեցի ընկերութեան, յայտնելով նորա օգտին եղած նուերը և հարցրի նորա կարծիքը այս գումարի գործածութեան մասին, յայտնելով միանգամայն, որ հանգուցեալը իւր կենդանութեան ժամանակ մտադիր էր հրատարակել հին մատենագիրներ, և միջի այլոց Ասողիկի և Ղևոնդի պատմութիւնները, որին եթէ ընկերութիւնը համաձայնի՝ այստեղ ձեռնարկեմ նոցա տպագրութեան:

1881 հոկտ. 9 ին ընկերութիւնից հաւանութեան պատասխան տալով՝ ձեռք զարկի այս պատմագիրների տպագրութեան:

Ասողիկը լոյս տեսաւ 1885 թ. նոյեմբերին, իսկ Ղևոնդը 1887 թ. մայիսին: Ընկերութեան ուղարկածս հաշիւներից երևում է, որ Ասողիկի վերայ ծախուած է 1088 ր. 42 կոպ. իսկ Ղևոնդի վերայ 566 ր. 85 կ. ուրեմն այս երկու տպագրութեանց վերայ ծախսել եմ՝ ընդամենն 1655 ր. 27 կոպ.:

Այս ծախսը ծածկելու համար ընկերութեան պատկանած փող մօտս կար—ա) 1000 ր. նուիրուած ի յիշատակ Յ. Իզմիրեանցի, Է) Այս գումարով Արեւելեան փոխառութեան տնայականեր գնել էի, որոնցից, մինչև ծախսեր սկսելս տակոս գոյացաւ 91 ր. 87 կ. և տամալները ծախելիս, նոցա գինը բարձրացած լինելով՝ այլ ևս շահ 25 ր. = 116 ր. 87 կ. Է) 600 ր., որ կազմում էր մրցանակաբաշխութեան յատկացեալ 10000 րուբլու մի տարեկան տոկոսը (1883, յունուար—գեկտեմբեր): Այս գումարը կատարարն իր կենդանութեան ժամանակ յատկացրել էր մի հին մատենագրի տպագրութեան, որովհետև մրցանակի արժանի աշխատութիւն չէր ներկայացուած 1881 թ. համար, և այսպիսի գէպերում նորա համաձայնութեամբ տպագրվում էին հին մատենագիրներ: (Այսպիսի գումարներով Թիֆլիսում տպուե-

ցան Խորինացին և Ագաթանգեղոսը): Բայց կտակարարի մահից յետոյ նորա եղբայրն ուրիշ տակասարեր թղթերի ասկոսներին հետ ստացել էր և այս 600 ր., սակայն երբ խնդիրը պարզուեցաւ՝ ինձ վերադարձրեց այդ գումարը գործածելու համար սահմանեալ նպատակին: Այս գումարը որոշեցի աւելցնել գրքերի հրատարակութեան ընկերութեան օգտին նուիրուած և հին մատենագիրների տպագրութեան յատկացրած 1000 ր. վերայ, որով ընկերութեան պատկանած փողն եղաւ $1000 + 116 \cdot 87 + 600 = 1716 \text{ ր. } 87 \text{ կպ.}$, որից դուրս գալով արգէն եղած ծախսը (1655 ր. 27 կ.) մնում է 61 ր. 60 կ. որ յատկացնելու եմ ընկերութեան օգտին:

ձեմարանին նուիրուած 1000 ր. գումարով նոյնպէս գնել էի Արեւելեան փոխառութեան տոմսակներ, որոց շահը և վաճառի գնին աւելորդը վերայ գալով՝ դարձաւ նոյնպէս 1116 · 87 կ.: Իմ հարցմունքիս, թէ ինչպէս հարկաւոր է ծախսել այս գումարը՝ ձեմարանի վարչութիւնը 1881 թ. մայիսի 27 ին ինձ պատասխանեց, որ ցանկանում է այս գումարին ունենալ գրքեր ձեմարանի մատենադարանի համար: Այս ցանկութեան լրում ապիս ես աշխատեցայ ընտրել աստուածաբանութեան, եկեղեցական պատմութեան, Հայոց լեզուի, պատմութեան և աշխարհագրութեան վերաբերեալ ընտիր գրքեր և ուրիշ այնպիսի շարագրութիւններ որոնք յարատեւ նշանակութիւն ունին:

Այս գրքերից մի մասն ելաւ է Դէֆրէ-ձըրի գիտնականի մատենադարանից, մի քանի գիրք՝ Դիւլորիէի մատենադարանից, որոց ոմանց վերայ այս գիտնականներին ձօներ են նուերուած հեղինակների ձեռքով: Գրքերի մի ծագոյն մասը ձեռք եմ բերել հնագրալաճառներից, որով նոցա գինը զգալապէս պակաս դուրս եկաւ նոցա բուն արժեքից: Այս գրքերի իւրաքանչիւր հատորին վերայ արձանագրեցի, որ նուիրւում է ձեմարանին արդեամբք և ի յիշատակ Յ. Իզմիրեանցի: ձեմարանի վարչութիւնն էլ տնօրինել է այս գրքերը զետեղել առանձին պահարաններում, մակագրելով սոցա վերայ Յ. Իզմիրեանցի տնունը:

Այս գրքերի հաւաքածուից 1881 յուլիսի 4 ին ուղարկեցի Ս. Եջմիածին մի արկղ, հաշիւը հետը, ճանապարհի ծախսով

Հանդերձ 176 ր. 23 կ., երկրորդ անգամ 1885 մայիսի 15 ին 109 կտոր գիրք երկու արկղում, ձանապարհի ծախսով հանդերձ 733 ր. 71 կ., երրորդ անգամ 1889 ապրիլի 8 ին մի արկղ ձանապարհի ծախսով հանդերձ 158 ր. 20 կ. ուրեմն ընդ ամենը ծախսել եմ 176, 23+733, 71+158: 20=1068ր. 14 կ., որը գուրս գալով վերայիշեալ 1116 ր. 87 կպից. մնում էր ձեմարանապատկան փող—48 ր. 77 կ., որ ծախսել եմ Բեկլիււի աշխարհագրութեան վերջին հատորները (IX XV) գնելու և այդպիսով ձեմարանի օրինակին ամբողջացնելու:

Յօգուտ Ա. Պետերբուրգի չքաւոր հայ ուսանողներին նուիրուած 1000 ր. գումարից 470 ր. ես անմիջապէս բաժանեցի կարօտ և արժանաւոր հայ ուսանողներին, իսկ մնացած 530 ր. 1884 մայիսի 24 ին ներկայացրի Ա. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդարանին, խնդրելով որ ազագայում նոյն նպատակով գործածէ այդ գումարը: Սորա հետ խորհրդարանին ներկայացրի ինձանից 470 ր. նպաստ ստացող ուսանողներին ազգանուններն և իւրաքանչիւրի ստացած գումարի հաշիւը և ստորագրութիւնները:

Իսկ այն գրքերը, որոնք ինչպէս վերը յիշատակեցի, հանգուցեալ Իզմիրեանցը գնում էր մատենագիրներին և հրատարակիչներին իրախուսելու համար՝ արժան համարեցի ի յիշատակ հանգուցեալ բարերարին բաժանել մեր ծխական դպրոցներին և ուրիշ հասարակօգուտ մատենադարաններին: Այսպէս ուղարկեցի:

Ախալցխայի Կարապետեան ուսումնարանին	35	կտոր գիրք
Ղարսի հոգևոր ուսումնարանին	31	»
Հին Նախիջևանի երկուց սեւից դպրոցներին	12	»
Մոզգսի երկուց սեւից ուսումններին	11	»
Կալկաթայի Հայոց դպրոցին	12	»
Երևանի Հոգևոր դպրոցին մի Հայկազեան բառարան		
Լոյքեցի գի Հայ ուսանողաց գրադարանին	13	կտոր գիրք
Մոսկուայի	9	»

Այս կերպով, որչափ ես կարողացայ՝ փառացի և ամենայն բանն ճշտութեամբ կատարել՝ համոձայն հանգուցեալ բարերար-

րի և իմ՝ անմոռանալի բարեկամիս կամքին: Այսուհետև երբ կտակահատարութեան հաշիւս հրատարակելով ես այլ ևս կատարած իմ համարում իմ իբրեւ կտակահատրի գործունէութիւնս՝ ինձ մնում է ցանկալ, որ այն հաստատութիւնները որոնք այսուհետև պիտի գործադրեն կտակի մնայուն տնօրէնութիւնները՝ աշխատեն ճշտութեամբ գործադրել հանգուցեալ Յ. Իզմիրեանցի կտակը, որպէս զի կատարելապէս արդիւնաւոր լինի նա և դարեցդար անմահ պահէ Յ. Իզմիրեանցի յիշատակը, որին նա արժան է թէ իւր կենդանութեան ժամանակ արած բազմադիմի բարեգործութիւններով և թէ մահից յետոյ թողած աղքնոգութեա կտակով:

Կառավարող ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆ:

Հոկտ. 8-ին, 1889

Պ. բուրք.

ԿԵԼՍԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԵՌԱՄԵՆԱՅ ՀԱՇԻԻԸ 188%, 188%, ԵՒ 188%, ՈՒՍՈՒՄՆԵԿԱՆՍՍ ԵՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1886 թուի Օգոստոսի 3-ին տեղւոյս Հայ հասարակութիւնը ընտրեց մեզ քաղաքիս եկեղեցական - ծխական դպրոցների հոգաբարձու: Նախ քան պաշտօնավարութիւն ընկնելը՝ մենք տեղեկացանք որ մեր խնամոցը յանձնուող դպրոցները ոչինչ զրամ չունին պահեստի մէջ, ուստի և դժուար էր այդպիսի հանգամանքներում ուսումնարան կառավարելը: այդ իսկ պատճառաւ Կարսի Հայ հասարակութիւնը ինքնայօժար ստորագրութեամբ խոստացաւ որոշ քանակութեամբ նուէրներ տալ ուսումնարաններին յընթաց երեք տարուայ: Այդ նուիրատուութեանց համար կազմուած ժապաւինեալ մատենի մէջ նուիրատուները սեպհական ստորագրութեամբ պարտաւորուած էին խոստացեալ զրամը վճարել: բացի դորանից ցանկանալով որ տեղւոյս Հայ ծառայող դասակարգն ևս անմասն չմնայ դպրոցների նիւթական դրութեանը օժանդակելու գործում, ըստ մեր հասկացողութեան, կազմեցինք նոցա անուանական ցուցակը և որոշեցինք նոցանից իւրաքանչիւրի վճարելիքը՝ և թէև երկու անգամ դիմելով խնդրեցինք այդ նպաստն, բայց համարեալ թէ ոչինչ չստացանք: Իրա հետ ներկայացրած ցուցակից երևում է, որ բոլոր նուիրատուներից յընթացս մեր եռամեայ պաշտօնավարու-